



Support for Improvement in Governance and Management

A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU

Կարճ գրություն 21

Օգոստոս 2011

Պետական գնումներ

Արդյունավետության գնահատում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ո՞րն է պետական գնումների արդյունավետության գնահատման շարժառիթը:
- Որո՞նք են արդյունավետության հսկողության օգուտները:
- Ինչպե՞ս գնահատել արդյունավետությունը
- Պետական գնումների տարբեր մակարդակներում արդյունավետության գնահատման մեթոդաբանությունները



www.sigmaweb.org

This document has been produced with the financial assistance of the European Union. The views expressed herein can in no way be taken to reflect the official opinion of the European Union, and do not necessarily reflect the views of the OECD and its member countries or of beneficiary countries participating in the SIGMA programme.

1. Ո՞րն է պետական գնումների արդյունավետության գնահատման շարժառիթը:

Պետական գնումների պայմանագրերը կազմում են յուրաքանչյուր երկրի ՀՆԱ-ի և պետական բյուջեի ծախսի մեծ մասը: Եվրոպական Հանձնաժողովի կողմից իր վերջին Գնահատման Հաշվետվության մեջ (2011) հրապարակված տվյալների համաձայն պետական գնումները ԵՄ-ում 2009 թվականին կազմել են 2100 միլիարդ կամ ՀՆԱ-ի 19%: Ծախսերի այս մակարդակը միայն ծանրակշիռ պատճառ է պետական գնումների գործարկման արդյունավետությունը բոլոր մակարդակներում վերլուծելու համար:

Պետության գնումների համակարգի գերակա նպատակը պետական միջոցների օգտագործման ժամանակ արդյունավետության և գնի ու որակի հարաբերակցության ապահովումն է, մինչև ժամանակ ԵՄ պահանջներին և ազգային օրենսդրությանն ու քաղաքականությանը հետևելը: Արդյունավետության չափումը ձգտում է պատասխանել այլ հիմնարար հարցին, թե արդյոք գնումների համակարգը և գործարկումն ի վերջո իրականացվում է սահմանված հիմնական նպատակների համաձայն:

Պետական համակարգում արդյունավետության չափման երեք տարբեր մակարդակներ լայնորեն ենթակա են նույնականացման: ¹ Գոյություն ունեն սերտ կապեր այս երեք մակարդակների միջև՝ կատարման փոխադարձ կապվածության առումով: Այնուամենայնիվ, կատարողականի գնահատման կարիքները, նպատակները և մեթոդաբանությունը կարող է տարբերվել:

¹ Եվրոպական Միության Առողիտի Գերագույն Ինստիտուտի Կապի Կոմիտեն ներկայացրել է Մետա, Մակրո, և Միկրո մակարդակները Պետական գնումների Առողիտի Բրոջուրի մեջ (2010)

1. **Ազգային (Մետա) Մակարդակ** - պետական գնումների ազգային համակարգի կատարողականի գնահատում
2. **Պետական պատվիրատուի (Մակրո) Մակարդակ**- պետական պատվիրատուի գործողությունների կատարողականի գնահատում
3. **Պայմանագրի իրականացման հսկողության (Միկրո) մակարդակ**- առանձին պայմանագրի իրականացման գնահատում

2. Որո՞նք են արդյունավետության հսկողության օգուտները:

Կատարողականի նկատմամբ արդյունավետ հսկողության հիմնական օգուտները նշված են ստորև՝ կատարողականի գնահատման երեք տարբեր մակարդակներին հղում կատարելով:

Ազգային (Մետա) Մակարդակ. Ազգային մակարդակում պետական գնումների համակարգի կատարողականի (ստանդարտների կամ որակի) վերաբերյալ որակյալ տեղեկատվությունը.

- օժանդակում է քաղաքականություն սահմանողներին՝ հասկանալ, թե ինչպես են փոխազդում քաղաքականության տարբեր նպատակները և ինչպես է քաղաքականությունն ազդում գնումների համակարգի ընդհանուր կատարողականի վրա,
- թույլատրում է կառավարություններին և խորհրդարաններին բարելավել որոշումների ընդունման որակը և ձեռնարկել երկարաժամկետ և կառուցողական միջոցներ, որոնք ամենաարդյունավետ ձևով կգարգացնեն իրենց պետական գնումների համակարգերը (օրինակ, գնումների քաղաքականության և կարգավորիչ բարեփոխումների, ինստիտուցիոնալ զարգացման և ունակությունների ամրապնդման առումով),

- կարող է ստեղծել հզոր խթան կառավարությունների համար՝ բարելավելու իրենց պետական գնումների համակարգերը, օգնել նրանց սահմանել առաջնայնություններ պետական գնումների ոլորտում բարեփոխումների գործողությունների համար և դիտանցել սահմանված նպատակների առումով արված առաջադիմությունը,
- կարող է տրամադրել արժեքավոր տեղեկատվություն՝ պետական ծախսային համակարգի գնահատման համար:

Պետական պատվիրատու (Մակրո) Մակարդակ. Արդյունավետության գնահատման լավ համակարգը կարող է օժանդակել պետական պատվիրատուներին՝ իրենց գործառնական նպատակների և ռազմավարությունների արդյունավետ կիրարկման և որոշումների ընդունման հետ կապված.

- տրամադրելով տեղեկատվություն, որը նրանց համար ավելի լավ պայմաններ է ստեղծում՝ որոշելու իրենց գնումների գործառնությունների արդյունավետությունը՝ որպես ամբողջություն և առանձին ծրագրերի մակարդակով, ինչպիսիք են հիմնական ենթակառուցվածքների ծրագրերը,
- նույնականացնելով ժամանակի ընթացքում իրենց գնումների գործառնությունների և դիտանցման առաջընթացի ուժեղ և թույլ կողմերը, այսպիսով օժանդակելով ճիշտ առաջնայնությունների սահմանմանը և թույլ ոլորտները բարելավելու համար համապատասխան գործողությունների ձեռնարկմանը,
- ձևավորելով երկարատև ռազմավարական և գործառնական ծրագրման անբաժանելի մասը, ներառյալ՝ տարեկան բյուջետային գործընթացը, դեկավարումը և աշխատակազմի զարգացումը:

Պայմանագրի իրականացման հսկողության (Միկրո) Մակարդակ. Պայմանագրի իրականացման հսկողությունն առանձին պայմանագրերի մակարդակով, վճարման մեխանիզմների հետ իր կապով.

- խթանում է պայմանագրերի պահանջների ավելի լավ և ավելի բարձր որակի իրականացում,
- գնահատում է, թե արդյոք պայմանագիրը արդյունավետ է գործում և ապահովում է “գնի և որակի հարաբերակցություն”,
- ապահովում է արժեքավոր արձագանք և հաստատում, թե որքանով է գնումների գործընթացը արդյունավետորեն ծրագրվել և իրականացվել, մասնավորապես հետևյալ առումով. տեխնիկական մասնագրերի կամ առաջադրանքի պայմանների մշակում, պայմանագրային ռազմավարության և պայմանագրի մոդելի ընտրություն, գնումների ընթացակարգի ընտրություն, ընտրության և շնորհման չափորոշիչների սահմանում և հայտի գնահատման և պայմանագրի շնորհման իրականացում:
- կառաջացնի լավ փաստարկներ և խթաններ գնումների գործընթացի բոլոր փուլերում, ներքին և արտաքին հարաբերություններում փոփոխությունների և բարելավումների համար՝ ստացված փորձի անընդհատ վերանայման միջոցով,
- երբ արդյունավետության չափման համար կիրառվում է համեմատական վերլուծությունը, պետական պատվիրատուն հնարավորություն կունենա համեմատել իր սեփական կատարողականը և արդյունքները նմանատիպ գործառնությունների համար պատասխանատու պետական պատվիրատուների հետ:

3. Ինչպե՞ս գնահատել արդյունավետությունը:

3.1 Խնդիրներ. Արդյունավետության հսկողության համակարգերի ստեղծումը և ղեկավարումը բարդ խնդիր է և կարող է առաջացնել մի շարք այլ խնդիրներ: Անհրաժեշտ է նախապես հասկանալ այս խնդիրները և հաշվի առնել դրանք, երբ արդյունավետության հսկողության համակարգը ծրագրվում և կիրարկվում է: Հետևյալ խնդիրներն ընդհանուր են արդյունավետության հսկողության համակարգերի համար՝ վերը նշված բոլոր երեք մակարդակներում.

- Քաղաքականության հետևողական նպատակները.** Քաղաքականության նպատակները, որոնք փոխվում են կամ անհամապատասխան են, կարող են արդյունավետության հսկողության համակարգերը դարձնել անիմաստ և հանդես գալ որպես խոչընդոտ՝ պետական գնումների արդյունավետությունը և տնտեսական արդյունքն առավելագույնի հասցնելու հնարավորությունների համար: Քաղաքականության և այլ նպատակների հետևողականությունը, հետևաբար, էական տարր է արդյունավետության և հսկողության գնահատման համար:
- Ճշգրիտ և վստահելի վիճակագրական տեղեկատվություն.** Կատարողականի գնահատումը և հսկողությունը կախված է որակյալ, համապատասխան և ճշգրիտ տվյալներից, որոնք պետք է հավաքվեն վստահելի և հետևողական ձևով՝ հիմնված հետազոտման լուրջ մեթոդաբանության վրա: Էական ջանքեր պետք է ներդրվեն՝ ապահովելու, որ հավաքված տեղեկատվությունը կարող է օգտագործվել գործնականում:
- Արդյունավետության սահմանումը և գնահատումը.** Կատարողականի գնահատումը հաճախ ձգտում է գնահատել “արդյունավետությունը”, սակայն զոյություն չունի եզակի սահմանում կամ արդյունավետության գնահատման եղանակ: Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել, որ հստակ սահմանման մասին համաձայնություն կա և այն կիրառվում է հետևողաբար:
- Կատարողականով պայմանավորված ընդհանուր գիտելիքների ներկայացում..** Կարգավորիչ և ինստիտուցիոնալ մեխանիզմները կարող են պետական պատիրատուին առաջարկել մի քանի խթաններ՝ հասնելու բարելավված արդյունավետության կամ ավելի լավ կատարողականի՝ չնայած պետական պատվիրատուն կարող է ձգտել նման բարելավումների՝ պայմանավորված տնտեսական պահանջներով կամ որակի բարելավմանը վերաբերող խնդիրներով: Հետևաբար, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, թե ինչպես կարգավորիչ կամ ինստիտուցիոնալ մեխանիզմները կարող են օժանդակել կատարողականի դրական գնահատմանը:
- Կենտրոնական օժանդակություն և ուղղորդում.** Վերոնշյալ գործոններից շատերը կախված են կենտրոնական օժանդակումից և ուղղորդումից՝ և՛ կենտրոնական կառավարման մակարդակում, և՛ առանձին մարմինների ներսում: Սա կարող է պահանջել լայն տեղեկատվական արշավ, որը

կառաջնորդեն հստակ մանդատ, ազգային մակարդակում ուղղորդման փաստաթղթեր և օժանդակություն ունեցող կազմակերպությունները: Կարող է պահանջվել նաև ազգային մակարդակով քաղաքական որոշում, որը կպարտադրի պետական պատվիրատուներին կիրարկել արդյունավետության հսկողության իմաստալից համակարգեր և տրամադրել համապատասխան տեղեկատվություն՝ ազգային տվյալների հավաքման նպատակով:

- **Տեղեկատվության հասանելիությունը.** Տեղեկատվությունը, որը լայնորեն չի տարածվում, կարող է շատ քիչ գործնական կիրառություն ունենալ՝ ձեռքբերումների և արդյունքների հաշվետվությունը դարձնելով կարևոր: Արդյունքները և եզրակացությունները պետք է ներկայացվեն տարեկան հաշվետվության մեջ և թափանցիկ եղանակով հասանելի լինեն պետական ղեկավարման մարմիններին, ինչպես նաև հասարակությանը՝ համեմատման և վերլուծության նպատակով: Հաշվի առնելով գնումների գնահատման համակարգի գործառնության և գնման համար սահմանված հիմնարար նպատակները, հաշվետվությունը պետք է (i) նկարագրի հիմնական եզրակացությունները՝ պետական գնումների գործառնությունների ուժեղ և թույլ կողմերի առումով, և (ii) սահմանի համակարգի բարելավման համար առաջարկվող գործողությունների ցուցակ: Արդյունքները պետք է կազմեն ռազմավարական ծրագրման մասը՝ կարճաժամկետ և միջնաժամկետ առումով:

Գրություն. Հիմնական պահանջները, արտադրական ծավալների և ներդրվող ռեսուրսների ցուցանիշները

Կատարողականի գնահատման համար կարևոր է բոլոր երեք մակարդակներում սահմանել հիմնական պահանջներ և կատարողականի ցուցանիշներ: Սույն գրությունը տրամադրում է որոշակի տեղեկատվություն այս գործունեության վերաբերյալ:

Գլխավոր գործողություններից մեկը հիմնական պահանջի սահմանումն է, որի նկատմամբ կգնահատվի կատարողականը և եթե այդ հիմնական պահանջն իրենից ներկայացնում է ընտրված չափանիշ՝ յուրաքանչյուր ցուցանիշը, որի նկատմամբ կկատարվի գնահատումը և համեմատումը: Ըստ էության, հիմնական պահանջը ներկայացնում է կատարողականի այն մակարդակը (ընդունելի լինելը կամ արդյունքը), որին պետք է հասնել որոշակի ժամկետում: Այն նաև իրենից ներկայացնում է սկզբնակետ՝ որոշակի ժամկետում առաջընթացի աստիճանը գնահատելու համար, օրինակ՝ մեկ օրացուցային տարի:

Կատարողականը կարող է գնահատվել տարբեր միջոցներով՝ կախված օգտագործված ցուցանիշի բնույթից: Արտադրական ծավալների ցուցանիշները հիմնականում կարող են գնահատվել թվային համակարգի միջոցով (օրինակ, ձեռք բերված տնտեսական խնայողությունները), այնինչ ներդրված ռեսուրսների ցուցանիշները, ինչպիսիք են ընթացակարգային շրջանակի որակը, հիմնականում պահանջում է անընդհատ գնահատում՝ որակավորված գնահատողի կողմից, ինչը կարող է լրացվել սոցիոլոգիական հարցումներով և տեղեկատվության հավաքման նմանատիպ գործիքներով: Գնահատման համակարգի վերջին տարրը՝ կատարողականի թիրախների սահմանումն է բառերով կամ թվերով և/կամ երկուսի համակցությամբ: Կառավարությունն այս թիրախներից ոմանք կսահմանի որպես հանրային ոլորտի զարգացման և բյուջետային կիրարկման ընդհանուր նպատակների մաս, օրինակ, դրամական խնայողությունների և հանրային ոլորտում ծառայությունների մատուցման արդյունավետության բարելավումն առումով: Նման (ազգային մակարդակով սահմանված) նպատակները պետք է կիրարկվեն պետական պատվիրատուի կողմից, այնինչ գործառնական նպատակները, որոնք

վերաբերում են բացառապես պետական պատվիրատուին, կսահմանվեն այդ մարմնի ղեկավարության կողմից:

Հիմնական նպատակը եղել է կատարողականի ցուցանիշների վրա հիմնված համակարգի զարգացումը՝ պետական գնումների կատարողականի ոլորտի վերաբերյալ տեղեկատվության և ուղղության տրամադրման նպատակով, ինչը տնտեսագիտության բնագավառում հայտնի մեթոդաբանությունն է: Հիմնականում կատարողականի ցուցանիշների ընտրությունը կապված է արտադրական ծավալների հետ, երբ չափելի գործոններ են օգտագործվում՝ համակարգի կատարողականի գնահատման համար: Արտադրության ծավալները ցուցադրում են, թե արդյոք համակարգն աշխատում է տրված ստանդարտ գործոնների համաձայն, բայց դրանք չեն փորձում բացատրել, թե ինչու է ձեռք բերվում որոշակի արդյունքը: Գնումների ոլորտում արտադրական ծավալի ցուցանիշի օրինակ է դրամական ցուցանիշների արժեքը, ինչպիսիք են խնայողությունները և արդյունավետության բարելավումը: Այնուամենայնիվ, միայն արտադրության ծավալների ցուցանիշների վրա հիմնվելը բավարար մեթոդ չէ՝ գնահատելու պետական գնումների համակարգի չափանիշը և առաջընթացը:

Հավասարապես կարևոր է ներառել նաև ներդրված ռեսուրսների և գործընթացների ցուցանիշները, քանի որ դրանք ընկած են պետական գնումների համակարգի ներսում տնտեսական արդյունքի ստացման հիմքում: Շատ կարևոր է՝ կարողանալ հսկել և/ կամ հասկանալ, թե ինչպես է այս արդյունքը ձեռք բերվում, որպեսզի պետական գնումներում ներմուծվեն լրացուցիչ առաջնային նպատակներ, ինչպիսիք են թափանցիկությունը, խտրականության արգելքը, արդար վերաբերմունքը և հաշվետվողականությունը: Այս նպատակների ամրապնդման գործիքները սովորաբար կապված են օրենսդրական և կարգավորիչ համաձայնագրերի մշակման, ինստիտուցիոնալ ծրագրման և հսկողության ու բողոքների մեխանիզմների հետ: Ներդրված ռեսուրսների ցուցանիշները կարող են գնահատվել միայն *“սուբյեկտիվ չափորոշիչի”* միջոցով՝ հիմնված գնումների անկախ մասնագետների կողմից ընդունված որակավորված որոշման վրա: Ներդրված ռեսուրսների ցուցանիշների բնորոշիչ օրինակներ են գնումների զանազան վիճակագրական տվյալները (օրինակ, բաց ընթացակարգի օգտագործման համամասնական բաժինը և տարեկան բողոքների թիվը) և ընկալման ցուցանիշները (օրինակ, օգտագործողների

բավարարման ցուցանիշը):

4. Կատարողականի գնահատման մեթոդաբանությունը պետական գնումների համակարգի տարբեր մակարդակներում

Հետևյալ բաժինը նախատեսում է մեթոդաբանության մի քանի օրինակներ, որոնք կարող են օգտագործվել՝ նախկինում նույնականացված երեք մակարդակներում կատարողականը գնահատելու համար:

4.1 Մեթոդաբանությունն ազգային (մետա) մակարդակում

Փորձագիտական վերահսկողություն և գնահատում. Փորձագիտական վերահսկողությունը հանրային ոլորտի գործառնություններում, ներառյալ՝ պետական գնումներում առկա խնդիրների բացահայտման գործիք է, որը մշակել է Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպությունը և օգտագործվել է երկար ժամանակ: Փորձագիտական վերահսկողության թիմը կազմված է միջազգային ավագ փորձագետներից, որոնք ունեն համապատասխան կրթություն և երկար տարիների փորձ վերահսկվող ոլորտում: Նպատակն է նույնականացնել գնումների համակարգի ուժեղ և թույլ կողմերը (կատարողականի վերահսկողություն)՝ հատուկ ուշադրություն դարձնելով հիմնական տարրերի վրա, ինչպիսիք են օրենսդրական և ինստիտուցիոնալ համաձայնագրերը, գնումներ իրականացնող կազմակերպությունները՝ հզորության և ունակությունների առումով, և շուկաները: Հիմնվելով վերլուծության և եզրակացությունների վրա՝ փորձագիտական վերահսկողության թիմն անհրաժեշտության դեպքում բարելավումների առաջարկություններ է անում, սակայն դա միայն տվյալ երկիրը պետք է որոշի, թե այդ առաջարկություններին հետևելով՝ ինչ գործողություններ պետք է ձեռնարկի:

Կարգավորիչ Ազդեցության Գնահատում (ԿԱԳ). Կարգավորիչ Ազդեցության

Գնահատման (ԿԱԳ) դերը նոր օրենքի կամ կանոնակարգի հնարավոր ազդեցության մանրամասն և կանոնավոր գնահատումն է՝ պարզելու, թե արդյոք կարգավորումը կարող է հասնել ցանկալի նպատակներին: ԵՄ Անդամ երկրները պետք է կիրարկեն Գնումների վերաբերյալ Հրահանգները, եթե դրանք կիրառելի են, պետական գնումների վերաբերյալ օրենքներում և ապահովեն, որ բոլոր այլ ազգային դրույթները համապատասխանում են ԵՄ Պայմանագրի (հիմա՝ ԵՄԳՊ) հիմնարար նորմերին և սկզբունքներին, սակայն առկա է զգալի ազատություն այն հարցում, թե ինչպես է Անդամ երկիրը մանրամասն կիրարկում այս պահանջները:

ԿԱԳ-ի կարիքն առաջանում է այն փաստից, որ կարգավորումը հիմնականում ունենում է բազմաթիվ ազդեցություններ, որոնք հաճախ շատ դժվար է կանխատեսել՝ առանց մանրամասն ուսումնասիրության և ազդեցությունը կրած կողմերի հետ խորհրդակցության: Կարգավորման խնդրին տնտեսական մոտեցումը ևս ընդգծում է այն մեծ ռիկսը, որ կարգավորման ծախսերը կարող են գերազանցել օգուտները: ԿԱԳ-ն առաջին հերթին մեթոդաբանություն է, որը պետք է կիրառվի մինչև նոր օրենսդրության ընդունումը, սակայն ոչինչ չկա, որը կկանխեր ԿԱԳ-ի օգտագործումը՝ գոյություն ունեցող օրենսդրության հետ կապված՝ որպես կարգավորիչ բարեփոխումների սկիզբ: ՏՀԶԿ-ն հրապարակել է մի շարք փաստաթղթեր ԿԱԳ մեթոդաբանության օգտագործման վերաբերյալ (տե՛ս ստորև Հետագա Ընթերցանություն): Եվրոպական Հանձնաժողովի Կանաչ գրքի գործընթացը կարգավորման ազդեցության վերլուծության այլ օրինակ է:

Շահառուների սոցիոլոգիական հարցումներ. Կանոնավոր սոցիոլոգիական հարցումները կարող են իրականացվել՝ հասցեագրելու կարևոր ոլորտներ և խնդիրներ՝ կապված պետական գնումների համակարգի կատարողականի հետ: Հարցումը պետք է տարածվի, անհրաժեշտության դեպքում, ընտրված մի քանի պետական պատվիրատուների, գործարար միությունների, առանձին մասնակիցների, աուդիտի ինստիտուտների, համալսարանների և այլ կարևոր շահառուների նկատմամբ, որոնք հետաքրքրություն են ցուցաբերում պետական գնումներում: Հարցումը կարող է պատրաստվել և իրականացվել տվյալ երկրի պետական գնումների գրասենյակի կամ անկախ կազմակերպության կամ կրթական մարմնի կողմից: Եթե հարցումը կանոնավոր կերպով կրկնվի, հնարավոր է նկատել

կարծիքների տարբերությունը մի հարցումից մյուսը: Հարցումների արդյունքները պետք է օգտագործվեն կառավարության կողմից՝ որպես հիմք՝ փոփոխություններ կատարելու պետական գնումների այն ոլորտներում, որտեղ խնդիրներ են հայտնաբերվել:

Արտաքին Աուդիտի ինստիտուտներ. Արտաքին աուդիտի ինստիտուտներն ունեն կարևոր առաջադրանքներ՝ պետական պատվիրատուի մակարդակով պետական գնումների գործառնությունների իրականացման մեջ թույլ և ուժեղ կողմերի բացահայտման առումով՝ հետագա վերահսկողության հիման վրա: Այս աուդիտը նպատակ ունի սահմանել օրենքներին և կանոնակարգերին համապատասխանության կամ անհամապատասխանության մակարդակը, ինչպես նաև կատարողականը և ձեռքբերումները, որոնք արվել են գնումների գործունեության համար սահմանված նպատակների և թիրախների հետ կապված:

4.2 Պետական պատվիրատուի (մակրո) մակարդակի մեթոդաբանություն

Այս մակարդակի մեթոդաբանությունները մշակվել են՝ պետական պատվիրատուի համար ապահովելու “ընդունված նորմերը”, այն մասին, թե ինչպես գնահատել գնումների իրենց գործառնությունների արդյունավետությունը: Կառավարությունը ևս կարող է օգտագործել այս մակարդակում արդյունավետության գնահատումից բխող տվյալները պետական գնումների գործառնությունները դիտանցելու և գնահատելու նպատակով և օրենսդրական և ինստիտուցիոնալ համաձայնագրերի ազդեցության մասին եզրակացություններ անելու համար: Պետական պատվիրատուի մակարդակում արդյունավետության գնահատման համակարգի արդյունքները կարող են արժեքավոր ներդրում ունենալ ազգային մակարդակով ձեռքբերումների մեջ, ինչպիսիք են բյուջետային խնայողությունները և հանրային ծառայությունների մատուցման մեջ որակի ընդհանուր բարելավումը:

Կատարողականի թիրախների սահմանումը. Կատարողականի օգտագործված թիրախները պետք է ունենան հետևյալ որակները.

- *Վերաբերում* են այն բանին, ինչին կազմակերպությունը նպատակ ունի հասնել,
- *Վերագրելի են*- գնահատվող գործունեությունը պետք է ունակ լինի ազդվել գործողություններից, որոնք կարող են վերագրվել կազմակերպությանը և այն պետք է հստակ լինի պատասխանատվության հարցերում,
- *Հստակ սահմանված* - հստակ, աներկբա սահմանումներով, որպեսզի տվյալները հավաքվեն հետևողական ձևով և հեշտ լինի հասկանալ և օգտագործել գնահատման արդյունքները,
- *Ժամանակին*, տվյալները հրապարակվեն բավականաչափ կանոնավոր կերպով՝ առաջընթացը գրանցելու համար և բավականաչափ արագ, որպեսզի այդ տվյալները դեռևս օգտակար լինեն,
- *Վստահելի* – բավականաչափ ճշգրիտ՝ դրա նպատակային օգտագործման համար և փոփոխություններին արձագանքող,
- *Համեմատելի* - կա՛մ նախկին ժամանակաշրջանների, կա՛մ այլ վայրերում նմանատիպ ծրագրերի հետ:
- *Ստուգման ենթակա* – դրան օժանդակող ճշգրիտ փաստաթղթերով, որպեսզի գնահատումն իրականացնող գործընթացները կարողանան ստուգվել:

Պետական պատվիրատուի մակարդակում կատարողականի թիրախների, ցուցիչների և գնահատման որոշ օրինակներ

I. Տնտեսական արդյունավետության գնահատումը

- **Դրամի վերածվող տարեկան խնայողություններ.** Այն ապրանքների և ծառայությունների համար, որոնց գները չեն տատանվում շուկայում: Հիմնված նմանատիպ կազմություն ունեցող պայմանագրերի ներկայացուցչական զաբյուղի վրա (արտադրանքի և ծառայություններին վերաբերող և թվերով արտահայտված), որն ապահովում է ժամանակի ընթացքում հետևողական հաշվարկ և ենթակա չէ մասնագրերի արագ փոփոխության, գնի և արժեքի զարգացումը որոշվում է 1 տարվա կտրվածքով և կիրառվում է գնումների ողջ ծավալի նկատմամբ:
- **Առանձին գների վերլուծություն.** Ապրանքների և ծառայությունների համար, որոնք ենթակա են գնի արագ տատանման և մասնագրերի փոփոխության, ինչպիսիք են SS և կոմունալ ծառայությունների մատուցման ոլորտը, առանձին գների վերլուծությունը պետք է իրականացվի սկզբնական տարին հաշվի առնելով՝ խնայողությունների և կորուստների չափը որոշելու համար:
- **Գնումների գործառույթների՝ դրամի վերածվող տարեկան արդյունավետություն (գնից բացի).** Ստուգվող, դրամի վերածվող խնայողությունների գնահատումը՝ արժեք/օգուտ համեմատական վերլուծություն կատարելու միջոցով գնումների գործառույթների X տարուց մինչև Y տարին: Արդյունավետությունն ընդգրկում է միննույն կամ բարելավված արդյունքներ՝ ավելի քիչ ռեսուրսներով, փոփոխելով արդյունավետության ձեռքբերումները բարելավումների միջոցով կա՛մ արտադրության (օրինակ, տեխնոլոգիական գործընթացների), կա՛մ ներդրման մեջ (օրինակ, համագործակցության, տեխնիկական ապահովման և գործընթացների):
- **Ծրագրի/պայմանագրի կիրարկման արդյունավետությունը.** Մեկ անգամ իրականացվող ծրագրերի համար, ինչպիսիք են կապիտալի ներդրման կամ ենթակառուցվածքային ծրագրերը, իրականացման հնարավորության ուսումնասիրությունը (գործնական դեպքի քննարկում) կատարողականի մանրամասն թիրախների հետ միասին՝ ներառյալ՝ ծախսերը և կիրարկման

վերջնաժամկետները, կազմում են այն հիմքը, որի նկատմամբ իրականացվում է ծրագրի գնահատումը:

II. Գնումների գործառույթների և ընթացակարգերի որակի գնահատումը

Հնարավոր ցուցանիշների օրինակներ.

- Ծրագրման և նախապատրաստման համար միջին ժամանակաշրջանը չպետք է գերազանցի X օրը,
- Մրցույթի ծրագրման և նախապատրաստման միջին ծախսը չպետք է գերազանցի X եվրոն,
- Մրցակցային ընթացակարգերը, ինչպիսիք են բաց և սահմանափակ ընթացակարգերը, ներառյալ՝ ԵՄ շեմից ցածր մրցակցային ընթացակարգերը պետք է օգտագործվեն ոչ պակաս, քան ընթացակարգերի ամբողջ քանակի X տոկոսում (և X տոկոսում, եթե շեմը գերազանցում է X եվրոն),
- Ոչ մրցակցային ընթացակարգերը, ինչպիսիք են առանց պայմանագրի հայտարարության նախնական հրապարակման բանակցային ընթացակարգը (և ուղղակի շնորհումները), պետք է հասցվեն նվազագույնի և չպետք է գերազանցեն ընթացակարգերի ամբողջ քանակի X տոկոսը,
- Մասնակցության միջին ցուցանիշները՝ տարվա ընթացքում բաց հրավերքների հետ կապված, չպետք է պակաս լինեն X քանակի հայտերից կամ դիմումներից,
- ՓՄՁ-ներին շնորհված պայմանագրերի քանակը պետք է պակաս չլինի, օրացուցային տարվա ընթացքում շնորհված պայմանագրերի ընդհանուր գումարի X տոկոսից,
- Բողոքների թիվը օրացուցային տարվա ընթացքում չպետք է գերազանցի իրականացված մրցույթների ընդհանուր թվի X տոկոսը,
- Էլեկտրոնային գնումների տոկոսը չպետք է պակաս լինի օրացուցային տարվա ընթացքում մրցույթների ընդհանուր քանակի X տոկոսից՝ սկսած X տարուց,

III. Արտաքին և ներքին հարաբերությունների և համագործակցության

ստանդարտների գնահատումը

Գնահատման մեթոդները

- Մատակարարի բավարարվածության տարեկան հարցում՝ ապահովելու, որ մատակարարների մեծամասնությունը բավարարված են պետական պատվիրատուի հետ համագործակցությամբ:
- Ներքին Օգտագործողների տարեկան հարցում, որը նպատակ ունի ապահովել, որ ներքին օգտագործողների մեծ մասը բավարարված են գնումների կազմակերպությունների ծառայություններով:

Հնարավոր Ցուցիչներ

- Մատակարարի Բավարարվածության համակցված ցուցանիշը պետք է լինի ավելին, քան X-ը՝ համաձայնեցված սանդղակով և չպետք է աճի տարեկան Y տոկոսով:
- Ներքին Օգտագործողների համակցված ցուցանիշը չպետք է գերազանցի X-ը՝ համաձայնեցված սանդղակով և չպետք է աճի տարեկան Y տոկոսով:
- Գնումների ծախսերը, որոնք կատարվում են պետական պատվիրատուի ստեղծած *շրջանակային* պայմանագրի/համաձայնագրի միջոցով, չպետք է լինեն գնումների ծավալի X տոկոսից պակաս:

Համեմատական վերլուծություն. Համեմատական վերլուծությունը, որն ընդգրկում է բոլոր կամ մի քանի պետական պատվիրատուների գնումների հաջողված համակարգերի համեմատական ուսումնասիրությունները կամ վերլուծությունը, կարող է գերազանց մեթոդ լինել: Համեմատական վերլուծության տվյալները կարող են ազգային մակարդակով հասանելի դարձվել՝ ապահովելու գնումների արդյունավետության գնահատման համակարգի միասնականությունը ամբողջ երկրում, ինչը կարող է նաև օժանդակել ազգային մակարդակում համեմատություններին:

Համեմատական վերլուծությունը նաև մեթոդ է, որի միջոցով պետական պատվիրատուն կարող է համեմատել իր սեփական գործառնությունները տարբեր ոլորտներում՝ համեմատելի արտաքին կազմակերպությունների հետ, ինչպիսին է

նմանատիպ պետական պատվիրատուն, որը հայտնի է իր գերազանց գործառնություններով: Համեմատական վերլուծությունը կարող է նաև օգտագործվել զանազան այլ համեմատությունների համար, ինչպիսիք են գները կամ ծառայությունների մակարդակը:

4.3 Մեթոդաբանությունները պայմանագրի կիրարկման (միկրո) մակարդակում

Գնումների մասին կարճ գրություն 22- Պայմանագրի իրականացման նկատմամբ հսկողության իրականացումը նշում է այն մեթոդաբանությունը, որը կարող է օգտագործվել առանձին պայմանագրերի արդյունավետության գնահատումը, բաժանված երեք լայն ոլորտների՝ մատակարարման հսկողություն, հարաբերությունների հսկողություն և պայմանագրի իրականացման նկատմամբ հսկողությունը: Արդյունավետության գնահատումը պայմանագրի իրականացման նկատմամբ հսկողության գործընթացի մաս չէ: Առանձին պայմանագրերի արդյունավետության գնահատումը հիմնականում կհետևի նույն ուղուն, որը սահմանված է վերևում՝ ստեղծելով տեղեկատվության և տվյալների հավաքման մեթոդներ, սահմանելով կատարողականի ոլորտները, կատարողականի թիրախները, հիմքը, ցուցիչները, չափումները և վերլուծության մեթոդները:

Հետագա ընթերցանություն.

- Եվրոպական Միության Աուդիտի Գերագույն Ինստիտուտի պայմանագրային կոմիտեն 2010 թվականին հրապարակել է պետական գնումների աուդիտի վերաբերյալ ուղեցույց:
- Համաշխարհային բանկ, OECD/DAC- Գնումների համակարգերի գնահատման մեթոդաբանություն (ԳՀԳՄ)
- [OECD Հրապարակումներ կարգավորման ազդեցության վերլուծության մասին](#): *Կարգավորման ազդեցության վերլուծություն. Քաղաքականության Հետևողականության գործիք (2009)*
- [Ներածական գիրք՝ Կարգավորման Ազդեցության Վերլուծության իրականացման համար \(2008\)](#): Կարգավորման Ազդեցության Վերլուծության համար ինստիտուցիոնալ շրջանակի կառուցումը. Քաղաքականություն

որոշողների ուղեցույց (2008)

- [Կարգավորման ղեկավարման համակարգերի ցուցիչներ \(2007\)](#)
- [ԿԱԳ-ն ՏԶՀԿ երկրներում և զարգացող երկրների խնդիրները \(2005\)](#)
- [ԿԱԳ ցուցակ \(2004\)](#)
- [Կարգավորման Ազդեցության վերլուծություն- ՏԶՀԿ երկրների առաջավոր փորձը \(1997\)](#)
- [ԿԱԳ նախագծման և կիրարկման տաս ընդունված նորմերը \(1997\)](#)
- ՏԶՀԿ Խորհրդի առաջարկությունները Կառավարության Կարգավորումների որակի բարելավման վերաբերյալ